ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **05.03.2020թ. Ժամը 11:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,

գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

Բացակայում էր - ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1.«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի և ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշման վերաբերյալ.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի և ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշման վերաբերյալ.

(Մ.Ամիրյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը **24.01.2020թ.** հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ, 45-րդ և 48-րդ կետերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները որոշել էր **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից 50-րդ չափաբաժնով ներկայացված հայտը մերժել և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մասնակցի տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն: Միաժամանակ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ պարբերության պահանջները */բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած/* գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 50-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

31.01.2020թ. «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին/Այսուհետև՝ ԳԲՔԱ/ ներկայացվել է բողոք **/հրապարակվել է 01.02.2020թ./** պահանջելով դադարեցնել N 5 արձանագրությամբ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին, 50-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին և նույն չափաբաժնի մասով ՆՏԱԴ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

«Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է ԳԲՔԱ-ՆԳ-2020/14 ծածկագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

11.02.2020թ. ԳԲՔԱ-ի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն նախկինում ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/14 ծածկագրով բողոքը վարույթ ընդունելու, նոր ծածկագիր տալու և գործի քննությունը սկզբից սկսելու մասին:

28.02.2020թ. ԳԲՔԱ-ի կողմից կայացվել է «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարելու մասին որոշում **/հրապարակվել է 03.03.2020թ./:**

1.2 **05.03.2020թ.** «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշումը, որոշեց սույն ընթացակարգի 50-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին:

1.3 Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի 1-16, 21-26, 31, 33-49, 51-53, 66-67, 71-րդ չափաբաժինների մասով **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ն, 17-20-րդ չափաբաժինների մասով՝ **«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ**-ն, 54-65, 68-70-րդ չափաբաժինների մասով՝ **«Ար-Մեդիկա» ՍՊԸ**-ն արդեն իսկ ճանաչվել էին ընտրված մասնակիցներ և քանի որ արդեն ավարտվել է սույն ընթացակարգով նախատեսված անգործության ժամկետը հետևաբար հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24**» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան ընտրված մասնակիցների հետ համապատասխան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու հաջորդ աշխատանքային օրվա ժամը 17:10-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա.Նազարյան
Գնահատող		Վ.Վահանյան
Գնահատող		Հ.Ավետիսյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան